ալի Թորգոմյան, Սոս Սարգսյան և ուրիշներ)։ Լայն ճանաչում են գտել նաև այլ թատրոններից Սունդուկյանի անվան թատրոն եկած մի քանի ուժեր՝ Աբաս Ասրյան, Արման Կոմիկյան, Գեղամ Հարությունյան, Բարկեն Ներսիսյան, Թան Էլոյան, Էդուարդ Համբարձումյան և այլն։

Դերասանների և ռեժիսորների հետ միասին Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ոսկե ֆոնդի մեջ իրենց խոշոր ավանդն են մուծել թատերական նկարիչները. հաճախ ստեղծելով վերին աստիճանի հետաքրքրական, յուրահատուկ, իմաստալից, նուրբ ու վառ նկարչական ձևավորումներ։ Մարտիրոս Սարյանը, Գեորգ Յակուլյանը, Սիմոն Ալաջալյանը, Միքայել Արուաչյանը, Ստեփան Թաբյանը, Արա Սարգսյանը, Արմեն Չիլինգարյանը, Կարո Մինասյանը, Սերգեյ Արուաչյանը, Պատվական Անանյանը, Վասիլ Վարդանյանը, Մելիքսեթ Սվախչյանը, Սարգիս Արուաչյանը, Արմեն Գրիգորյանը և ուրիշներ իրենց ստեղծագործություններով շատ են նպաստել թատրոնի ներկայացումների կուլտուրայի բարձրացմանը։ Այդ գործում զգալի դեր են կատարել նաև սովետահայ կոմպոզիտորները։ Թատրոնի բեմադրությունների երաժշտական ձևավորմանը ակտիվորեն մասնակցել են այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Ալ. Սպենդիարյանը, Ավետիսյան Տեր-Հովհաննիսյանը, Աշոտ Սաֆյանը, Արամի Այվազյանը, Սերգեյ Եսայիբյանը, Լևոն Խոջա-Էյնաթյանը, Գրիգոր Եգիազարյանը, Ասոն Բաբաջանյանը և ուրիշներ։

Սունդուկյանի անվան թատրոնը մեր Միության ճանաչված ազգային թատրոններից է։ Նրա ստեղծագործական կոլեկտիվի բարձր արվեստը բազմիցս հիացմունք է պատճառել մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայի և եղբայրական ռեսպուբլիկաների հանդիսատեսներին։ 1930 թ. Սունդուկյանի անվան թատրոնը մասնակցեց Համամիութենական թատերական ցիկլոպիային, 1941 և 1950 թվականներին գաստրոլային ներկայացումներով հանդես եկավ Մոսկվայում, 1956 թ. մասնակցեց հայ արվեստի և գրականության տասնօրյակին, միշտ էլ արժանանալով հանդիսատեսների ու թատերական քննադատության բարձր գնահատականներին։ Անվանի արվեստաբաններն ու թատրագետները բազմիցս ընդգծել ու հիացմունքով են խոսել Սունդուկյանի անվան թատրոնի ազգային ռեալիստական արվեստի, նրա ուրույն գեղարվեստական գեմքի, ներքին մեծ պոտենցիալի և ինտելեկտուալ ունակությունների մասին։

1956 թ. Սունդուկյանի անվան թատրոնը պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, 1960 թ. ստացավ ակադեմիական թատրոնի կոչում։

Բոլորելով իր գոյության քառասնամյակը, Սունդուկյանի անվան թատրոնը, չի ստեղծագործական եռանդով ու նոր մտահղացումներով, ձեռնամուխ է եղել կոմունիզմ կառուցող ժողովրդի էսթետիկական գաստրոնոմիայի նոր ու պատվարեր խնդիրների կենսագործմանը, որ մեր կուլտուրայի գործիչների առջև դրել է ՍՄԿՊ XXII պատմական համագումարը։

Ս. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Սովետական կարգեր հաստատվելուց առաջ Հայաստանում չկային թանգարաններ, մշտական գործող ցուցահանդեսներ, հայ ժողովրդի դարավոր պատմությունն ու մշակույթը ուսումնասիրող հաստատություններ։

1921 թ., դաշնակների փետրվարյան ավանտյուրան ջախջախելուց հետո, երբ հայ ժողովուրդը ձեռնամուխ է լինում խաղաղ ստեղծագործական աշխատանքի, Երևանի նկարիչները՝ Թբիլիսիի «Հայ արվեստագետների ընկերության» անդամների հետ միասին, պետական թատրոնի միջանցքում (այժմյան Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենք), կազմակերպեցին նկարների ցուցահանդես, որից մի քանի տասնյակ նկար գնեց Հայաստանի կառավարությունը և 1921 թ. օգոստոսի 20-ին հիմք դրեց Պետական թանգարանին։ Թանգարանի առաջին վարիչը եղավ նկարիչ Վրթանես Ախիկյանը։

Թանգարանի հիմնադրումից մի երկու ամիսանց թանգարանի վարիչ նշանակվեց այժմ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը։ Նա ինքն էր հավաքում զանազան պետական ու հասարակական հիմնարկներում պատահաբար գտնվող թանգարանային արժեք ունեցող առարկաներ, գնում էր հայերեն հին-

ձեռագիր գրքեր, յուղանկարներ, հին գրամներ, կենցաղային առարկաներ։ Շուտով թանգարանի համար ձեռք բերված առարկաների թիվն այնքան շատացավ, որ հարկ եղավ թանգարանին հատկացնել դեռևս կիսաշեն Կուլտուրայի տան ձախ թևում մի մեծ սրահ և երկու փոքրիկ սենյակներ։

1921—1922 թթ. ձմռանը Կովկասի հայոց ազգագրական ընկերության հիմնադիր և ղեկավար Երվանդ Լալայանի ջանքերով Թբիլիսիից Երևան փոխադրվեց ընկերության հարուստ հայագիտական գրադարանը՝ պատմաազգագրական թանգարանի հնագիտական և ազգագրական գույքը, որի հիման վրա 1922 թ. գարնանը հիմնադրվեցին թանգարանի հնագիտական և ազգագրական բաժինները, որոնց առաջին վարիչը նշանակվեց Երվանդ Լալայանը։ Սրանով էլ հիմք դրվեց ապագա Պատմական թանգարանին։

Այդ ժամանակվանից Լալայանը փաստորեն սկսեց կառավարել թանգարանն ամբողջապես, թեև ընդհանուր ղեկավարությունը մնում էր Լուսժողկոմատին կից թանգարանային խորհրդի ձեռքին։

1922 թ. առաջին կիսամյակում Մոսկվայից ստացվեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Էջմիածնից Մոսկվա տեղափոխված թանգարանային առարկաներն ու Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի թանգարանային հավաքածուները։

Թանգարանի հարստացմանը մեծ չափով նպաստեց գրականագետ և պատմաբան Երվանդ Շահազիզը։ Նա Նոր Նախիջևանից Երևան տեղափոխեց հայ բնակչության հավաքած թանգարանային ժողովածուները՝ Նոր Նախիջևան քաղաքի պատմությանն ու գրական հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ նյութեր, որոնց հիման վրա 1922 թ. վերջերին կազմակերպվեց թանգարանի պատմագրական բաժին, որի վարիչ նշանակվեց Երվանդ Շահազիզը։ Պատմագրական բաժնում կենտրոնացվեցին հին հայերեն ձեռագրեր, հայ գրողների ձեռագիր երկեր, նամակներ, փաստաթղթեր, լուսանկարներ և բազմաթիվ այլ գրավոր նյութեր։

1922 թ. վերջում արդեն պաշտոնապես գոյություն ունեին թանգարանի հետևյալ վեց բաժինները՝ հնագիտականը, պատմագրականը, ազգագրականը, գեղարվեստականը, տնայնագործականը և նեղափոխությանը։

Հետագա տարիներին տնայնագործական բաժին միացվեց ազգագրականին, իսկ հեղափոխության բաժին 1928 թ. անջատվեց թանգարանից և դարձավ ինքնուրույն Պետական թանգարան։

Այսպիսով, Հայաստանի Պետական թանգարանի առաջին տարին, մինչև 1922 թ. վերջը, նրա ձևավորման ժամանակամիջոցն էր, երբ հիմնադրվեցին նրա բաժինները և թանգարանն ստացավ իր պաշտոնական Հայաստանի Պետական կենտրոնական թանգարան անունը։

* * *

Անցյալ 40 տարիների ընթացքում Հայաստանի թանգարանն ապրեց զարգացման մի քանի շրջան։

Առաջին շրջանը, որ գլխավորապես դրծադրվեց զանազան հիմնարկներում եղած թանգարանային առարկաները կենտրոնացնելու և մասնավոր գնումների միջոցով ժողովածուները հարստացնելու վրա, տևեց մինչև 1931 թ.։

1926 թ. Երևան փոխադրվեց և հանձնվեց հնագիտական բաժին Անիի հնագարանի գույքի այն մասը, որ հաջողվել էր կորստից փրկել և ժամանակավորապես պահել Սանահնի վանքում։

1929—1931 թթ. ընթացքում Էջմիածնի Պետական թանգարանի գույքը ևս հանձնվեց Պետական կենտրոնական թանգարանին։

1931 թ. թանգարանին հանձնվեցին Հնությունների Պահպանության կոմիտեի կողմից ութը տարիների ընթացքում պեղումների և զանազան հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն բացված հնությունների ու մասնավոր ձեռքբերումների միջոցով հավաքած մի քանի հազար հնագիտական առարկաներ։

Ստացվում էին թանգարանային առարկաներ նաև զանազան հաստատություններից՝ Լուսժողկոմատից, Հողժողկոմատից, Պարենավորման ժողկոմատից և այլ հիմնարկներից ու մասնավոր մարդկանցից։

Թանգարանի հարստացմանը զգալի չափով օգնեցին նաև Լենինգրադի և Մոսկվայի թանգարանները։ Նրանք իրենց գույքից հարուստ ժողովածուներ նվիրեցին և փոխանակության կարգով Հայաստանի թանգարանին հատկացրին եվրոպական և ռուսական նկարիչների ու քանդակագործների աշխատանքներից։

Թանգարանը, միաժամանակ, մասնավոր մարդկանցից գնում էր առարկաներ։ Այս եղանակով ձեռք էին բերվում, գլխավորապես, հին դրամներ, ազգագրական իրեր, տնային կարասու հին տեսակներ, ասեղնագործության նմուշներ, զգեստ և գեղարվեստական նկարներ։



Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի շենքը Լենինի հրապարակում

Մինչև 1925—26 տնտեսական տարին Թանգարանն առանձին բյուջե չուներ։ Նրա ծախսերը կատարում էր Լուսավորության ժողովրդական կոմիսարիատն իր բյուջեի հաշվին և պահանջված դեպքում առձեռն դումար էր տրամադրում Թանգարանային առարկաներ գնելու կամ ցուցահանդես կազմակերպելու համար։

Ինքնուրույն բյուջե ունենալը Թանգարանին հնարավորություն տվեց գիտական արշավներ կազմակերպել Հայաստանի տարբեր շրջանները՝ ազգագրական տեսակետով իրարից տարբերվող խմբերն ուսումնասիրելու և նրանց կենցաղին ու սովորություններին վերաբերող ազգագրական առարկաներ հավաքելու։ Այդ ժամանակ էր, որ հիմք դրվեց նաև ծրագրված հնագիտական պեղումներին, որոնք, սակայն, լայն զարգացում ունեցան Թանգարանի զարգացման հետագա շրջաններում։ Այս ժամանակամիջոցում զգալի չափով ընդարձակվեց Թանգարանի բռնած տարածությունը, որի մի մասը հատկացվեց ժողովածուների պահպանմանը, իսկ մի մասն էլ ցուցահանդեսներին։

Թանգարանն իր գոյության առաջին շրջանում կազմակերպեց մի քանի ժամանակավոր ցուցահանդեսներ, որոնք ընդհանուր էին և կազմակերպվում էին բոլոր բաժինների մասնակցությամբ։ Մեծ չէին և որևէ առանձին խնդրի չէին նվիրված։ Քիչ թե շատ աչքի ընկնող ցուցահանդեսներ կազմակերպվեցին 1925 և 1930 թվականներին, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 5-րդ և 10-րդ տարեդարձների առիթով։

Այդ ցուցահանդեսները կազմակերպվեցին հնագիտական, գրական, ազգագրական, պատկերագրական նյութերի հիման վրա, որտեղ ի ցույց էր դրված ամեն մի աչքի ընկնող առարկա, առանց որևէ հարցադրման։ Այդ երկու ցուցահանդեսներն էլ կազմակերպվեցին մեծ շտապողականությամբ, առանց միատեսակ Թանգարանային կահույքի և այլ հարմարանքների։ Այնուամենայնիվ այդ ցուցահանդեսները, որոնց միջոցով առաջին անգամ ի ցույց էին դրվում Հայաստանի և հայ ժողովրդի մշակույթին ու պատմությանը վերաբերող նյութեր, մեծ հետաքրքրություն առաջ բերին Երևանի և մերձակա վայրերի աշխատավոր ժողովրդի մեջ։ Ժողովուրդը մեծ և փոքր խմբերով այցելում էր Թանգարան՝ տեսնելու համար իր և իր նախորդների մշակույթն ու ազգագրական տարբեր խմբակցությունների կենցաղը, սովորությունները։

Թանգարան այցելողների թիվը եղել է՝ 1925/26 թթ. 14016 մարդ, 1929/1930 թթ.՝ 17226 մարդ։ Այցելուների թվից երևում է, որ Թանգարանը իրրև նոր երևույթ, դեռևս մեր ժողովրդի կենցաղի մեջ չէր մտել, մանավանդ որ այցելուների մի մասը Հայաստան եկած

դրսեցիներ են եղել։ Մեր ժողովուրդը նոր էր ընտելանում թանգարանին և, ինչպես փաստերն են ցույց տալիս, բավական դանդաղ։

Թանգարանի զարգացման առաջին շրջանի ցուցահանդեսները, բացի փոքր ու հապճեպ կազմակերպված լինելուց, գաղափարազուրկ են եղել, առարկաների բացատրագրերի մեջ միայն ժամանակն ու տեղն է ցույց արվել և չի լուսաբանվել պատմական միջավայրը։ Ցուցահանդես կազմակերպողները դեռևս չդիտեին առարկաների միջոցով պատմական երևույթները բացատրել։ Այդ նույն թերությունը պոյություն ուներ Սովետական Միության բոլոր թանգարաններում և այդ էր հիմնական պատճառը, որ 1930 թ. դեկտեմբեր ամսին Մոսկվայում հրավիրվեց թանգարանային աշխատողների համամիութենական խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին սովետական թանգարանների անելիքները։ Այդ խորհրդակցությունը նշեց թանգարանային գործի անբավարար վիճակը Սովետական Միության մեջ և կոչ արեց բոլոր թանգարաններին վճռական պայքար ծավալել կղերա-ֆեոդալական և բուրժուական իդեալիստական գաղափարախոսության դեմ, վերակառուցել թանգարանները մարքս-լենինյան գաղափարախոսության ոգով և ստեղծել իսկական սովետական թանգարան։

Այդ խորհրդակցությունը բեկման կետ հանդիսացավ սովետական թանգարանների համար հին, խորթ գաղափարախոսությունից ազատագրվելու գործում։ Ի թիվս բազմաթիվ թանգարանների Հայաստանի թանգարանը ևս սկսեց վերակառուցվել և իր ցուցադրությունները կազմակերպել հասարակական ֆորմացիաների զարգացման հիման վրա։

Այստեղից էլ սկսվում է թանգարանի զարգացման երկրորդ շրջանը, որ 1931-ից տևեց մինչև 1939 թ.։

Սակայն շրջանը բնորոշ է նրանով, որ թանգարանն անընդհատ որոնումների մեջ է գտնելու ցուցադրության նոր ուղիներ, կազմակերպելու համար ցուցահանդեսներ, որտեղ անցյալի նյութական մշակույթի մնացորդները հանդես գան իբրև իրենց դարաշրջանի երևույթները ցույց տվող վկաներ և ոչ թե ինքնանպատակ առարկաներ, որոնք վկայում են լոկ իրենց պատրաստող վարպետների արտակարգ շնորհքը։

Առաջին հերթին վերանայվեցին ցուցադրվող առարկաների ժողովածուները և նրանցից ընտրվեցին այնպիսիները, որոնք բնորոշ են իրենց ժամանակի համար և ցույց են տալիս դարաշրջանի տնտեսությունը, տեխնիկան, հասարակության զբաղմունքը, կենցաղը և սովորույթները։

Այսպես, 1932 թ. հնագիտական բաժնում կազմակերպվեց նախնադարյան տոհմատիրական ժամանակաշրջանը, ստրկատիրական և ֆեոդալական կարգերը ներկայացնող մի ցուցահանդես, որն ընդգրկում էր ընդամենը մի նախասրահ, երկու ցուցասրահ և նրանց հարակից միջանցքը, ընդամենը 250 քառակուսի մետր հատակով։

Սակայն, այդ ցուցահանդեսն ուներ երկու էական թերություն։ Գլխավոր թերությունն այն էր, որ հավասարապես բոլոր դարաշրջանների համար անհրաժեշտ ցուցադրական առարկաներ չկային։ Թանգարանի ժողովածուները թեև հարստացել էին, բայց մեծ մասամբ պատահական, մեկը մյուսին կրկնող նյութեր էին և, շատ դեպքերում, անկարող էին ներկայացնել մեր ժողովրդի մշակույթն իր բնորոշ կողմերով։ Օրինակ, այն ժամանակ Հայաստանում քարի դարը բոլորովին չէր ուսումնասիրված և թանգարանում հին քարեդարի առարկաներ չկային, այդ պատճառով ներածական սենյակում հին քարեդարը ներկայացված էր Անգլիայից նվեր ստացված գործիքների գիպսե ընդօրինակություններով։

Այդ ցուցադրության մեջ համեմատաբար հարուստ էր տոհմատիրական կարգերի քայքայման ժամանակաշրջանի բաժինը, որ ներկայացված էր մեծ մասամբ Ե. Լալայանի և Հայաստանի Հնություններին Պահպանության կոմիտեի կատարած դամբարանային պեղումների նյութերի հիման վրա։

Ստրկատիրական կարգերը ներկայացված էին Ուրարտուի վերարերյալ նյութերով, որ խիստ միակողմանի և աղքատիկ էր։ Այդ բաժնում ցուցադրված էին միայն սեպագիր արձանագրություններ և գերմանացի գիտնական Լեման Հաուպտի գրքից արտանկարած մի քանի ձեռանկարներ։

Ֆեոդալական կարգերը ներկայացված էին հին ու միջնադարյան ժամանակաշրջանին վերաբերող առարկաներով։ Հին Հայաստանը պատկերված էր հունական, հռոմեական, պարսկական և հայկական դրամներով, իսկ միջին դարերի բաժնում, բազմաթիվ երկրորդական կարգի առարկաների կողքին աչքի էր ընկնում Մյո Առաքելոց վանքի հոյակապ քանդակապարդ դուռը։

Այդ ժամանակ Անիի պեղածո նյութերը ցուցադրության մեջ չկային, որովհետև նրանք ուղարկվել էին Լենինգրադ Պետական Էրմիտաժում ժամանակավորապես ցուցադրելու և նորոգելու համար։

Այդ ցուցահանդեսը որոշ փոփոխություններով և լրացումներով պահպանվեց մինչև 1939 թ.։ Անիի հնագիտական նյութերը Լենինգրադից ստացվելուց հետո ցուցադրվեցին մի առանձին սրահում, որի բացումը տեղի ունեցավ 1936 թ.։

1932 թ. կազմակերպված Պատմա-հնագիտական ցուցահանդեսի գերը շատ մեծ եղավ Հայաստանի հնագիտության զարգացման համար, որովհետև պարզվեց, թե ինչ ուղղությամբ պետք է ընթանա հնագիտական աշխատանքը բացերը լրացնելու և Հայաստանի անցյալի բոլոր փուլերը հավասարապես ուսումնասիրելու և թանգարանում ներկայացնելու համար։

Ամենից առաջ անհրաժեշտ էր հրաժարվել պատահական առարկաներից և Հայաստանի տարբեր դարաշրջանների մշակույթը ներկայացնել սիստեմատիկ պեղումների միջոցով հայտնագործված առարկաներով։

Այդ ժամանակվանից սկսած հետզհետե մշակվեց Հայաստանի հնագիտական աշխատանքների ծրագիրը, որը և գործադրվեց հետագա տարիներին։

Երևանական թվականներին թանգարանն այլևս մենակ չէր։ 1931 թ. հիմնադրվեց Կուլտուրայի պատմության ինստիտուտը։ 1936 թ. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի կազմում ստեղծվեց հնագիտության սեկտոր։ Հաճախ այդ երկու հաստատությունները թանգարանի, երբեմն էլ Հուշարձանների Պահպանության կոմիտեի և Լենինգրադի Պետական էրմիտաժի հետ համատեղ պեղումներ կատարեցին Հայաստանում, որոնք խոշոր արդյունքներ տվին։

Այսպես օրինակ՝

Քարեղաբը Հայաստանում հայտնագործվեց 1948—1950 թթ.։

Պղնձի դարը, որ հաջորդել է քարի դարին և ընդգրկում է մ.թ.ա. III հազարամյակը, Հայաստանում ուսումնասիրվեց Շենգավիթում 1935—1937 թթ. պեղումների ժամանակ։

Բրոնզի դարը պեղվեց գլխավորապես Լճաշենում։ Այդ դարաշրջանն ընդգրկում է գրեթե ամբողջ II հազարամյակը մ.թ.ա. և հաջորդել է պղնձի դարին։ Լճաշենի պեղումներն սկսվել են 1954 թ. և դեռ շարունակվում են։

Ուրարտուի մշակույթը (X—VI դդ. մ.թ.ա.) ուսումնասիրվում է Կարմիր-բլուրի և Արին բերդի պեղումների հիման վրա։

Հետուրարտյան ժամանակաշրջանը (VI—IV դդ. մ.թ.ա.) ուսումնասիրվում է Դվինի ստորին շերտերի պեղածո հարուստ նյութերի հիման վրա։

Հին Հայաստանը (III դ. մ.թ.ա. IV դ.) ուսումնասիրվում է գլխավորապես Գառնի ամրոցի պեղածո նյութերի հիման վրա։

Միջնադարյան Հայաստանը (IV—XIII դդ.)՝ Դվինի պեղումներով։

Վերը թվարկած պեղումները ոչ միայն հնարավորություն տվեցին ուսումնասիրելու Հայաստանի պատմության տարբեր շրջանները, այլև ձեռք բերած նյութերի հիման վրա կարելի դարձավ թանգարանային ամբողջական ցուցահանդես կազմակերպել, մշակույթի բազմաթիվ առաջնակարգ հուշարձանների միջոցով։ Եվ երբ 1939 թ. հարկ եղավ «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազներգության 1000-ամյակի տոնակատարության ժամանակ թանգարանում ցուցադրել Հայաստանի միջնադարը, մեր թանգարանը կարողացավ այդ կատարել առանց մեծ դժվարությունների։

«Սասունցի Դավթի» 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսը մի կարևոր պատմական երևույթ էր՝ հայ ժողովրդի դարավոր մշակույթի նշանակությունը բարձրացնելու և ամենալայն չափերով ժողովրդականացնելու համար։

Թանգարանի զարգացման երկրորդ շրջանում մեծ չափերով աճեց նաև ազգագրական բաժինը։ 1931 թ. սկսած, մի քանի տարի իրար հետևից արշավներ կազմակերպվեցին պրոֆ. Ստ. Լիսիցյանի գլխավորությամբ Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ մի շարք վայրեր՝ ուսումնասիրելու ժողովրդի կենցաղը և հավաքելու ազգագրական առարկաներ։ Ուսումնասիրվեցին Գորիսի, Սիսիանի (1931), Մեղրու (1932), Կիրովականի և Ստեփանավանի (1934—1935), Լենինականի, Վրացական ՍՍՌ Ախալցխայի և Ախալքալաքի (1936) շրջանները, որոնց ընթացքում ձեռք բերվեցին բազմաթիվ առարկաներ։

1934 թ., նոր ձեռք բերված նյութերի հիման վրա, ազգագրական բաժինը կազմակերպեց Զանգեզուրի և Մեղրու հայերի կենցաղին և սովորություններին նվիրված ընդարձակ մի ցուցահանդես։

Ցուցահանդեսում առարկաների և պատկերների միջոցով ներկայացված էր ժողովրդի զբաղմունքը, հին գյուղի սոցիալական շերտավորումը, շահագործումը, տնայնագործական օժանդակ արհեստները, սովորույթները և կենցաղը։

Այս ցուցադրությունը լինելով իր տեսակի մեջ առաջինը, իհարկե, ուներ թերություններ, բայց նա մեր թանգարանի ազգագրական բաժնի համար ունեցավ կարևոր նշանակություն.

որովհետև բաց արեց ցուցադրության համար նոր ուղի։ Ազգագրությունն այլևս ժողովրդի միայն սնոտիապաշտությունը և ծեսերը չէր ներկայացնում, այլ ամենից շատ զբաղվում էր կենսական հարցերով, ժողովրդի զբաղմունքով, նրա՝ բնական միջավայրին հարմարվելու, բնության ընձեռած հնարավորություններից օգուտ քաղելու, նրա ստեղծած արվեստի խնդիրներով։

Այս շրջանում թանգարանի կյանքում տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն։ 1935 թ. Հայաստանի Պետական կուլտուր-պատմական թանգարանը բաժանվեց երեք ինքնուրույն թանգարանների, որոնցից Պետական Պատմական թանգարանն իր կազմի մեջ պահեց հնագիտական և ազգագրական բաժինները, Կերպարվեստի թանգարանը (այժմ Պատկերասրահ)՝ գեղարվեստական բաժինը, Դրական թանգարանը՝ գրական բաժինը։ Այնուհետև մեր այդ երեք թանգարաններն սկսեցին զարգանալ իրարից անկախ, ինքնուրույն կերպով։

Թանգարաններն անջատվելուց հետո պետության կողմից դրամական հատկացումները և աշխատակիցների թիվը մեծացան։ Եթե 1935 թ. բոլոր երեք բաժիններն ունեին 208903 ռուբլու բյուջե, 1936 թ. միայն Պատմական թանգարանն ստացավ 103 000 ռուբլի, իսկ 1939 թ.՝ 350 000 ռուբլի։

Թանգարանի զարգացման երկրորդ շրջանում այցելությունների թիվը դեռևս շատ փոքր էր և թանգարանը ոչ մի միջոցի չէր դիմում ժողովրդական զանգվածները թանգարանի հետ կապելու համար։ 1932 թ. հնագիտական բաժինն այցելեցին 5676, իսկ 1937 թ.՝—12 519 մարդ։

Զանգեզուրի և Մեղրիի կենցաղին ու սովորույթներին նվիրված ցուցահանդեսն ավելի շատ այցելուներ ունեցավ։ 1933 թ. այդ բաժինն այցելեցին 15 753, իսկ 1934 թ.՝ 29 424 մարդ։

Փաստերը ցույց են տալիս, որ երբ ժողովրդին տալիս ենք նորույթներ և հետաքրքիր, հուզող հարցերի նվիրված ցուցահանդես, ապա այցելուների թիվը մեծ է լինում։ 1939 և 1940 թթ. 9 ամսվա ընթացքում «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպին նվիրված ցուցահանդեսը դիտեց 46 000 մարդ։ Այդ թիվն իր ժամանակի համար բավական մեծ էր։

1940 թ. թանգարանն անցավ Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկների շարքը և այդ ժամանակվանից նա թևակոխեց իր զարգացման երրորդ շրջանը։

Երրորդ շրջանը բնորոշ է նրանով, որ թանգարանում ուժեղանում և նոր թափ է ստանում գիտա-հետազոտական աշխատանքը, թանգարանը դառնում է հայ ժողովրդի պատմության տարբեր բնագավառների ուսումնասիրության մի կարևոր օջախ։ Այս շրջանում, որ տևում է մինչև մեր օրերը, թանգարանը բարձրանում և կանգնում է Սովետական Միության թանգարանների առաջին շարքերում։ Աճում, հասակ են առնում գիտական աշխատողները, շատանում է նրանց թիվը, ասպիրանտուրայի միջոցով պատրաստվում են թանգարանային աշխատողների նոր կադրեր, որոնց մի մասն իր ուսումն ստանում է Մոսկվայի և Լենինգրադի առաջնակարգ թանգարաններում։ Այս շրջանում թանգարանը ձեռնարկում է խոշոր հնագիտական պեղումներ՝ Դվինում, Լճաշենում, Արթիկում և այլուր, սկսում է հրատարակել առանձին գրքեր և աշխատությունների ժողովածուներ Հայաստանի հնագիտության, ազգագրության և պատմության տարբեր հարցերի վերաբերյալ։

Այս շրջանում թանգարանի գիտական ղեկավարության մեջ, իբրև խորհրդատու, մեծ դեր է խաղում ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, Սովետական Միության լավագույն թանգարանագետներից մեկը։

Թանգարանի հրատարակած գրքերից հիշատակության արժանի են ճարտարապետ Թ. Թորամանյանի աշխատությունների երկու ստվար հատորները, որոնցից առաջինը լույս տեսավ 1942 և երկրորդը՝ 1948 թվականին։ Վ. Աբրահամյանի «Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.» գիրքը տպագրվեց 1956 թ.։ Թանգարանը հրատարակեց նաև հայերեն վիմական արձանագրությունների երկու ժողովածուներ, որոնցից մեկը նվիրված է Հովհաննավանքին և մյուսը՝ Սանահնին։ Հրատարակվել են «Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի» ժողովածուի հինգ հատորները, որոնց մեջ բացի պատմագիտական, հնագիտական և ազգագրական բնույթի ուսումնասիրություններից, քննարկվել են նաև թանգարանագիտական հարցեր։ Հրատարակվել է պրոֆ. Ստ. Լիսիցյանի կազմած Ազգագրական հարցարանը, որ ազգագրագետների համար ուղեցույց է ծառայում ժողովրդի կենցաղի ու սովորույթների մասին գրանցումներ կատարելիս։

1952 թ. լույս է տեսել Դվինի պեղումների արդյունքներին նվիրված գրքի առաջին հատորը, որ ընդգրկում է 1937—1950 թթ. աշխատանքները։

1939 թ. հետո թանգարանը մի նոր շրջադարձ կատարեց նաև իր ցուցահանդեսային աշխատանքների մեջ։ Եթե առաջներում հնագիտական բաժնում մեր ժողովրդի միայն հին

մշակույթն էր ցուցադրում, այժմ սկսեց ձևավորել մշտական ցուցադրություններ կազմակերպելուն, որ ընդգրկելու էր Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը հնագույն քարի դարից սկսած մինչև մեր օրերը։

Այդ դժվարին աշխատանքը հետզհետե առաջ գնաց և ավարտվեց 1960 թ.։ Բացի այդ, թանգարանը կազմակերպեց մի շարք հոբելյանական ցուցահանդեսներ՝ նվիրված Հայաստանում Սովետական կարգեր հաստատելու 20, 25, 30 և 35-ամյակներին և Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 30 և 40-ամյակներին։ Այդ ցուցահանդեսներում ցուցադրվել են Սովետական Հայաստանի նվաճումները արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի բնագավառներում, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է առնվազն 69 000 այցելու մի քանի ամսվա ընթացքում, իսկ 1957 թ. կազմակերպված 9 ամսվա ընթացքում ունեցավ 130 000 այցելու, որ մինչև այսօր չգերազանցված թիվ է Հայաստանի թանգարանների համար։

Պատերազմի տարիներին թանգարանը կազմակերպեց մի շարք շրջիկ ցուցահանդեսներ, հարմարեցրած գործարանային ակումբներին, որոնք նվիրված էին ժողովուրդների բարեկամության, հայրենասիրության, հայ և ռուս ժողովուրդների հերոսական անցյալին և այլն։

1943 թ. թանգարանում կազմակերպվեց Կովկասի լեռներում ֆաշիստական զորքերից խլված ռազմական ավարի ցուցահանդես, որը վեց ամսվա ընթացքում ունեցավ 65 000 այցելու։

Թանգարանն այսօր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտա-հետազոտական հաստատություններից մեկն է, և նրա վրա է դրված հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ցուցադրությունը, նյութական մշակույթի մնացորդների հավաքումը և ուսումնասիրությունը պատմական, հնագիտական և ազգագրական տեսակետով։

Թանգարանն այժմ սերտորեն համագործակցում է 1959 թ. հիմնադրված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ, ինչպես դաշտային, այնպես էլ գիտա-հետազոտական աշխատանքների բնագավառում։

Բացի այդ, թանգարանը մեծ չափով օգնել է Ռևոլյուցիայի պետական թանգարանին, տալով նրան իր հարուստ ժողովածուներից 4567 փաստաթղթեր և լուսանկարներ, մի քանի հազար լուսանկարչական սլայդներ, որոնք վերաբերում են Հայաստանի ռևոլյուցիոն շարժումներին։

Թանգարանը օգնել է նաև Երևան քաղաքի պատմության, Լենինականի դավառագիտական և մի շարք այլ թանգարանների կազմակերպմանն ու զարգացմանը։

Հայաստանի Պատմական թանգարանը գիտական սերտ կապեր ունի Լենինգրադի Պետական Էրմիտաժի, Մոսկվայի Պատմական թանգարանի, Պուշկինի անվան արվեստի թանգարանի, Լենինգրադի Ազգագրական թանգարանի, Վրաստանի և Ադրբեջանի թանգարանների հետ։

Հայաստանի Պատմության թանգարանն այսօր ունի հետևյալ կառուցվածքը՝

Ա. Չորս բաժիններ՝

1. Հին և միջնադարյան պատմության,
2. Նոր և նորագույն պատմության,
3. Հաշվառման և պահպանման,
4. Մասսայական աշխատանքի։

Հաշվառման և պահպանման բաժինն ունի չորս աշխատանոցներ՝ 1. կավանոթների վերականգնման և մակետների պատրաստման, 2. մետաղների մաքրման և վերականգնման, 3. բանվածքների և ասեղնագործությունների վերականգնման, 4. լուսանկարչատուն և երկու արհեստանոց (ատաղձագործական և կազմարարական)։

Մասսայական աշխատանքի բաժինն ուսումնասիրում է ցուցահանդեսը, կազմակերպում է դասախոսություններ և աշակերտական խմբակներ, որոնք ուսումնասիրում են Հայաստանի հնագիտությունը, ազգագրությունը և պատմությունը։

Բ. Թանգարանն ունի գիտական չորս կաբինետներ՝

1. Հնագիտության,
2. Լիսիցյանի անվան ազգագրության,
3. Դրամագիտության և
4. Ճարտարապետության։

Այժմ թանգարանում գործում է հայ ժողովրդի և նրա նախորդների մշակույթին նվիրված մշտական ցուցահանդես քարեդարից սկսած մինչև XIX դարի վերջը։ Այդ ցուցահանդեսը հետզհետե լրացվում է նոր հայտնագործված նյութերով։ Բարեփոխվում է նաև ցուցադրության եղանակը նորագույն մեթոդների հիման վրա։

Պատմական թանգարանը պարբերաբար կազմակերպում է հայ ժողովրդի մշակույթին նվիրված շրջիկ ցուցահանդես շրջանային ակումբների համար։

Տպագրության ընթացքում է գտնվում պատմական գիտ. թեկնածու Խաչիկ Մուշեղյանի «Դրամական շրջանառությունը Դվինում

ըստ պեղածո նյութերի» աշխատությունը։ Այս տարի տպագրության է հանձնվելու թանգարանի աշխատությունների 6-րդ հատորը, տողերիս գրողի «Հաղբատ» մենագրությունը, որի մեջ բացի վիմական արձանագրություններից քննարկվում է նաև Հաղբատի ճարտարապետությունը, ճշգրտվում են հուշարձանների կառուցման և վերանորոգման թվականները և կառուցման հանգամանքները։

Արդեն տպագրվել է մշտական ցուցահանդեսի ուղեցույցը։ Խմբագրվում են անցյալ տարիներին գրված թանգարանի հայերեն արձանագրությունների, գեմմաների և կնիքների (Ե. Մուշեղյան), ոսկերչական առարկաների (Վ. Աբրահամյան) գիտական կատալոգները, որոնք տպագրության են հանձնվել այս տարվա սկզբներին։

Տպագրության են պատրաստվում Դվինին նվիրված ստվարածավալ աշխատության երկրորդ հատորը, որ ընդգրկում է 1951—1960 թվականների պեղումների արդյունքները, Լճաշենի (Հ. Մնացականյան) և Արթիկի (Տ. Խաչատրյան) դամբարանային պեղումների գիտական հաշվետվությունները։

Աղդաղրության կաբինետը հրատարակության է պատրաստում մի մենագրություն նվիրված հայկական համբարությունների (Վ. Աբրահամյան)։

Նոր և նորագույն պատմության բաժինը ուսումնասիրում է Կիլիկյան Հայաստանի ազգային ազատագրական շարժումները (Վ. Մելիքսետյան), Ալավերդու բանվոր դասակարգի և պղնձահանքերի պատմությունը (Վ. Քալաշյան) և ուրիշ շատ խնդիրներ։

Արագորեն աճում են թանգարանային առարկաների ժողովածուները։ Այդ են ցույց տալիս հետևյալ թվական տվյալները։

Թանգարանային առարկաների տեսակները	Ձեռքբերումների քանակն առարկաների թվով				Ամբողջ հավաքածուն վերջի 1961 թ. թանգարանի հավաքածուներում
	1921—1930	1931—1940	1941—1950	1951—1960	
1. Հնագիտական	4972	9259	3368	7548	25147
2. Բրամագիտական . . .	7601	10397	4052	13656	35706
3. Ազգագրական	2716	2327	378	3474	8895
4. Նոր պատմության .	—	—	—	1210	1210
5. Ճարտարապետական .	—	—	—	1770	1770
6. Հայաստանի պատմահնագիտական և ազգագրական լուսանկարների սլայդներ . . .	—	2812	12966	4208	19986
7. Հին հրատարակության հայերեն գրքեր . .	—	—	—	758	758
8. Օժանդակ առարկաներ (նկարներ, գծագրեր, մակետներ, լուսանկարներ, պատճեններ)	—	—	—	12886	12886
Ընդամենը	15289	24795	20764	45510	106358

Բացի այդ, թանգարանի մասնագիտական գրադարանն ունի 34 000 հայագիտական գրքեր։

Հետզհետե ավելանում է թանգարանն այցելողների թիվը։ Այդ են ցույց տալիս ստորև բերվող թվական տվյալները, որոնք վերցված են մուտքի տոմսերի և տարեկան հաշվետվությունների տվյալներից։

Պատմական թանգարան այցելողների թիվն ըստ տասնամյակների

1925—1930 թթ.	—78.111	մարդ	հինգ	տարվա	ընթացքում
1931—1940 »	—197.796	»	տասը	տարվա	ընթացքում
1941—1950 »	—264.912	»	»	»	»
1951—1960 »	—485.318	»	»	»	»

ընդամենը 35 տարվա ընթացքում՝ 1.026.197 մարդ

Այս թվական տվյալների մեջ չեն մտել թանգարանի ֆիլիալների, շրջիկ ցուցահանդեսների, ազգագրական բաժնի 30-ական թվականների 8 տարիների այցելությունները, սակայն, հետևողականորեն աճը ցույց է տալիս, որ թանգարանն իրոք դարձել է մեր ժողովրդի դաստիարակման, մտավոր զարգացման կարևոր օջախներից մեկը և Հայաստանի նյութական մշակույթի պահպանության կենտրոնը։

Մեր թանգարանը սփյուռքահայության սիրած օջախներից մեկն է։ Արտասահմանից եկած հայերը մեծ սիրով են այցելում թանգարան և, բացի այդ, օտարության մեջ բնակվող շատ հայեր նվերներով իրենց կարոտն ու սերն են արտահայտում հայրենի երկրին և նրա անցյալի հայելին հանդիսացող պատմական թանգարանին։

* * *

Հայաստանի Պետական Պատմական թանգարանն այժմ թևակոխում է իր գոյության երկրորդ քառասնամյակը՝ գիտա-հետազոտական և կուլտուր-լուսավորական աշխատանքի ավելի փայլուն հեռանկարներով։

Նրա աշխատակիցների կոլեկտիվը միշտ կանգնած կմնա սովետական թանգարանագիտության առաջավոր շարքերում։

Կ. Ղ.

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ ВО ЛЬВОВЕ В XVI—XVIII ВЕКАХ

Изучение истории древнего украинского города Львова немыслимо без исследования той роли, которую играла армянская колония в прошлом города. Ни одна научная работа, ни одна публикация архивных материалов не может обойти молчанием львовскую армянскую колонию, занимавшую заметное место в экономической и культурной жизни города в период феодализма.

Среди 137 документов, из которых составлен недавно изданный во Львове сборник документов «Социальная борьба в городе Львове в XVI—XVIII вв.[1], десять документов (№ 16, 23, 26, 28, 48, 80, 101, 106, 107, 111) имеют отношение к истории армян на Украине. Сборник составлен научными сотрудниками Центрального государственного исторического архива во Львове, располагающего наиболее богатыми на Украине фондами, отражающими как феодальный период истории Украины вообще, так и историю армянских колоний в западноукраинских городах (Львов, Броды, Жовква, Золочев, Станислав и др.), в частности. Публикуемые в сборнике документы из истории армянской колонии во Львове подобраны составителями из двух архивных фондов — из фонда Львовского городского суда и фонда Совета города Львова. Документы, датированные между 1598 и 1708 гг., отражают самые различные стороны жизни армянской колонии и существенным образом углубляют наши знания о ней.

Публикуемые архивные материалы убедительно показывают, что основной причиной враждебного отношения польского католического патрициата, господствовавшего в средневековом городе, к львовским армянам являлись экономические факторы — конкуренция между армянскими и неармянскими купцами (док. № 16, 28, 48, 106). В одном из документов (№ 48, 1608 г.) подробно перечисляются товары,

[1] Соціальна боротьба в місті Львові в XVI—XVIII ст. Збірник документів. Упорядники А. Л. Грицеляк, А. М. Охрим, Х. А. Панек, П. І. Фостик-Захарчишина. Під редакцією Я. П. Кіся. Львів, Видавництво Львівського університету, 1961. 443 с. (Центральний державний історичний архів у місті Львові).